

Շուպեցին ի բնիկն իւր վայր. ուր ի կատար ցըցուեալ լերին
Սողկողի ողբանըւէր, եւ ցարդ արտօսըր կաթեն վէմք:

Ովիդեայ Այլակերպութիւնք Գիրք Զ:

Պոլիկտես առ Կրակտոր:

(Տես երես 211)

Թ Ո Ւ Ղ Թ Ժ Դ .

Պոլիկտես առ Կրակտոր:

Միջանկեայ առևևակայք. — Տրիբունք ժողովրդիս. — Համարակայք. — Փոխառու մարակայք:

Վերջի նամակիս մէջ ջանացի համառօտապէս Հռոմայ կառավարութիւնը հասկըցնելու: Գանձաւորներէն սկսեալ որոնք շէնքին հիման վրայ դըրուած են, մինչև հիւպատոսները՝ որ անոր գաթաթն են, պատշաճողութիւնքն՝ որիչ են, իրաւունքներն՝ ծանօթ, պարտաւորութիւնները՝ հաստատուն օրէնքներով որոշեալ, անանկ որ կարծես թէ էական ատենակալութիւններէն և ոչ մէկը կրնայ անոնց մերձենալ՝ որոնք քեզի ծանուցի: Սակայն կան ուրիշներ որ անոնցմէ բոլորովն օտար են, որոնք պարկեշտ տիպոսով մը՝ զիրենք ունեցողներուն անանկ իշխանութիւն մը կու տան, որ մէկ քանի պարագայից մէջ վերագոյն է քան զհիւպատոսաց իշխանութիւնն, որ կրնայ նաև ուղղակի ընկձել զանոնք:

Կախ ուրեմն ծողվորէան քրիստոնէի սկսիմ, որոնց անունը յաճախ չորս կողմս կը լսեմ: Այս անմիաբանութեան որդիքը՝ այն ատեն հաստատուած ըլլալով երբ ալետալի կոիւններով երկու կարգերն իրարու հետ կ'իյնային, չստեղծն երբէք իրենց սկիզբը: Թագաւորաց մերժուելէն տասնըվեց տարի ետքը, ժողովուրդը՝ մենծերուն տիրապետութենէն ձանձրացած, և պարտատեարց անյազ ընչափրութենէն սպառեալ, երաւ փախաւ այն քաղքէն՝ որ ալ ոչ իբր հայրենիք կը համարէր, երգուրննալով մէյ մ'ալ ոտք չկոխելու՝ մինչև որ հին պարտուց պարտաւորութիւնը իրմէն բոլորովն չջնջէին, և մասնաւոր ատենակալներ ընտրելու իրաւունքն իրեն չչնորհէին, որոնք կարող ըլլային այնուհետև իրեն բարւոյն վրայ հսկել: Ծերակոյտն և Պատրիկներն՝ այս լքումէն իրաւապէս սարսափելով, քիչ մը ուշ հասկցան որ ինքնակալք ան ատեն կը դադրին տիրապետելէն՝ երբ ալ չպատակ չունին. ուստի վախնալով որ այնուհետև անոնց ընդգիտութեամբ ամէն բան կրնան կորսնցնել՝ բռնադատուեցան ամէն բան չնորհելու անոնց՝ որ կանխաւ խոհեմ թոյլտուութիւններով կրնային դո՛ւ ընել:

Սակայն պարտուց թոյլտուութիւնը մէկ քանի փոփոխութիւններով եղաւ. այսինքն այն քաղքացիները միայն անկէ ազատ եղան՝ որոնք հատուցանելու բոլորովն անկարող էին. անոնք որ օրինաց զօրութեամբ իրենց պարտատեարց ձեւք մատուցած էին՝ խալըսեցան անոնցմէն, և ժողովրդէան ալ հրապարակաւ շնորհուեցաւ այն պահանջած իրաւունքն՝ որ կարող ըլլան անանկ ատենակալներ ընտրելու՝ որ իր բարիքը հոգան: Ասով ուրեմն անմիջապէս նոյն օրը գրոհները հատուցանելու, և ժողովրդէան մէջէն ընտրուեցան յաղթանակող դատին նեցուկներն, ծողվորէան քրիստոնէի տիպոսով: Այսչափն ալ դեռ բաւական չեղաւ. այլ անմիջապէս անոնց ընտրութենէն ետքը օրէնք մ'ալ հրատարակեցին, որով կ'արգիւլէին թէ ոչ ոք կարող ըլլայ անոնց դէմ ինչ և ինչ կերպով բռնութիւն բանեցնել, նոյնքալ ի ինչ կոչելով զան՝ որ այս օրինաց դէմ ընելու յանգրներ, որուն ինչքն իսկ Գեմետրէս գիցուհոյն փախի նուիրուէին, և ո՛ր և ինչ քաղաքացի կարող կ'ըլլար անպատուհաս զան սպաննելու: Այս օրինաց ճշգիւ պահպանութեանը վրայ ամէն մէկը երգուրնցաւ, թէ առանձին իրեն համար և թէ իրեն յաջորդաց համար, զարհուրելի անէծքներ կարգաչուելով անոնց դէմ որ իրենց երգմունքը մտնալու յանգրներէն: Ան ատեն ժողովուրդը յաղթանակաւ քաղաքը դարձաւ՝ առաջնորդեալ իրեն նորընտիր իշխանաւորներէն. և որպէս զի իր փախուստին՝ կրօնական կերպարանք մը տայ իր քաղաքում տեղը Լէտոս նոտրամէս կոչեց, ուր նաև հատրին Արամազդայ բազին մը կանգնեց:

Արջի բերան միայն երկու Տրիբուն ընտրուեցան. քիչ մը ետքը ուրիշ իրեք աւելցուեցան, և 297 տարւոյն անոնց թիւը մինչև տասն ելաւ: Ժողովուրդը ջանաց իր պաշտպանները շատցնելու, որուն ծերակոյտն ամենևին արգելք մը չգրաւ. յուսալով որ որչափ աւելի բազմանային այնչափ ալ աւելի զիւրին կ'ըլլար զանոնք երկաթաակելու:

Շատ մը տարիներ ըստ գրուիչ տիւրքաւորէան մէկ կ'ըլլար իրենց ընտրութիւնը: Սակայն այս ժողովոց մէջ, որոնց նախագահ կը նստէին մեծ տեւնակալք, քիչ մը ժամանակէ ետքը գիտեցին որ գուշակները ծածուկ Պատրիկաց ձեռնառու ըլլաւ:

1. Գլ. Cérés.
2. Ըստ Գիտնեսիոսի Աղիկառնացոյ, Գիրք Զ. Գլ. Թ, ժողովուրդը առջի բերան երկու Տրիբուն ընտրեց. յետոյ անոնց վրայ ուրիշ իրեք ալ աւելցուց, և այս հինգ արիւրուններով նորէն հռոմ մտաւ:

լով, ընտրութիւնները կ'արգիլէին, յաճախ ան-
 յաջող գուշակութիւններ մէջ բերելով: Այս
 դժուարութիւնս վերցնելու համար, առանց կրօն-
 քին դպչելու, 282 տարւոյն, Պորչիոս Աղբերոս
 Տրիբունը վճռել տուաւ, իրեն անունը կրող,
 Պոփա օրէնքի մը միջոցաւ, որ Տրիբունը ըստ
 սուրբ Կրիստոսի մէջ պիտոր ընտրուին, որոնք գուշակ-
 ներուն արարողութեանց ենթակայ չեն, որովհետեւ
 անոնց նախագահ նստող ատենակալները չունին
 այն մասնաւոր ձիրքը որ դից կամքը հարցնեն: Ա-
 մէն տարի, Գեկտեմարի Իգոսաց չորսին, նոր
 Տրիբուններ կ'ընտրեն, որոնք նոյն ամսուն տաս-
 նին իրենց պաշտօնը կը սկսին կատարել: Պաշտօ-
 նի մէջ եղող Տրիբուններէն մէկը վիճակով կ'որո-
 չուի, այս ժողովքին նախագահ նստելու: Ատեն
 մը, երբ օրը բաւելու չըլլար այս գործողութիւնս
 լնցնելու, անոնք որ արդէն ընտրուած կ'ըլլային՝
 իրաւունք ունէին իրենք իրենցմէ ընկերներ ընտ-
 րելու, մինչև լրանար այն թիւն որ օրէնքը կ'որո-
 չէ: Այս կերպ ընտրութիւնը ընկերաբար կ'ը-
 սուէր: 305 տարւոյն Տրիբուն օրէնքով մը վճռե-
 ցաւ ըստ ցեղից քուէարկութեամբ որոշելու այս
 սասնից թիւը:

Թեպէտ և ի սկզբան տրիբուններու իշխանու-
 թիւնը շատ հեռի էր այն զօրութենէն որ յետոյ
 ստացաւ, սակայն իրմով Հռոմէական կառավա-
 րութեան բնութիւնը շատ փոփոխութիւններ կը-
 րեց: Ամէն դատուց իշխանութիւնն, նոյն իսկ ա-
 նենակալացն ալ խախտեցաւ: Տրիբունը այնչափ
 աւելի զօրացան՝ որչափ աւելի արգելք ըլլաւու ի-
 րաւունքն ունենալով, քան թէ իրենք իրենցմէ գոր-
 ծելու, անկարելի էր որոշել այն կէտն՝ ուր պիտի
 կանկ առնէին: Նոյն այս առջի ատեններէ սկսեալ
 ոչ միայն յայտնի կերպով ժողովուրդը պաշտպա-
 նել սկսան, ամէն օրինաւոր իշխանութեան դէմ,
 այլ նաև ծերակուտին, և որ և իցէ աստիճանի ատե-
 նակալաց որոշմունքները մերժել, և մէկ խօսքով
 ոչնչացնել, դատաստանական վճիռները խափա-
 նել, զինուորագրութիւնները, հարկատուութիւն
 ները, և նաև Ալբերից որոշմանը դէմ գնել. իսկ
 ժողովուրդը ուրախութենէն յիմարեալ կը գովէր
 այն դատապարտելի գործողութիւնները՝ որոնք իբ-
 րև մեծարանք մը կը սեպէր իր զօրութեանը:

Սակայն ամէն բանի ընդգիտմանով շատ քիչ էր
 դեռ. ու մինչև ամէն բանի ձեռք զարնելու յանդը-
 նեցան: Այսպէս համարձակեցան հինգ տարուան
 միջոց՝ ատենակալաց ընտրութեանը խափան ըլլա-
 ըս, ամենէն արժանաւոր քաղաքացիք գատաստա-
 նի կանչելու, յաղթանակողը իր յաղթանակին
 կառքէն վար իջեցնելու, զօրավարներ և նաև հիւ-
 պատոսներ՝ բանտարկելու. և վատանուն ընելու
 նոյն այն ժողովուրդը զոր պաշտպանել կը ձևացը-
 նեն, իր գլխաւորները անպատիւ ընելով՝ միով
 բանիւ, որպէս զի մէկ հայեցուածով մը միայն ցու-
 ցրեմք քեզի ասոնց իշխանութեան սասակութիւնը,
 Վայիոս Աէտուրիոս անունով Հռոմայեցի մը ի
 մահ դատապարտեցաւ, ժողովրդեան Տրիբունի
 մը ճամբան դացած ժամանակը՝ տեղ չտալուն հա-
 մարձ:

Նաև կրօնքը, այն սանձը զոր դիք մարդկային
 կրկն գրին, կրօնքն իսկ Տրիբունից չափազանց իշ-
 խանութեանն ալ աւելի ուժ կու տայ. իրենց ան-
 ձը նուիրական է, որոնց նաև սբաւան՝ տիտղոսը
 կու տան: Ոչ միայն սրբապղծութիւն սեպուած է
 անոնց անձանց դէմ՝ ինչև իցէ փորձ մը, այլ նաև
 ծանր պատուհասներ սպառնացած են անոնց՝ որ
 Տրիբունից վրայ խօսելով ինչև իցէ անարգական
 խօսք անոնց դէմ զուրցեն: Վերջապէս ինչ ալ
 համարձակին զուրցելու, յայտնի օրինաց մը պատ-
 ճառաւ՝ ոչ ոք կրնայ անոնց խօսքն ընդհատելու՝
 երբ ժողովրդեան առջին կը ճառախօսեն:

Այսպէս վատահ ըլլալով որ բնութիւնը իրենց
 դէմ չգօրեր, և միշտ պաշտպան ունենալով բազ-
 մութիւնը, որ անոնց զեղծմունքները իրեն փառք
 կը գրէ, այս անձինքս, որոնք և ոչ ատենակալաց
 կարգէն կը սեպուին, անպատու հաս զանոնք կը
 նախատեն, այնչափ որ նաև օրինաց վրայ ալ իշխե-
 ըս տասիճանը հասեր են:

Անհետեւ իրաւունքի մը միջոցաւ՝ այս ժողո-
 վրդեան իրաւանցը պաշտպան՝ հպարտ նեցուկնե-
 րը, ամբարտաւանութիւնը պարզութեանը հետ
 կը միացնեն, ու փառասիրութիւնը չափաւորու-
 թեան երևութիւնը կը ծածկեն: Չեն կրնար երբէք
 վայելել այն շքեղ պատիւներն՝ որ զարդ են նաև
 ամենաչնչին ատենակալութեանց. երբոր ճամբան
 երթալու կ'ըլլան, առջևնուն ստորին պաշտօնեայ
 մը միայն կ'երթայ, որ ահապարձ կ'ըսուի, և աւելի
 հնազանդութիւն ու վախ կ'ազդէ քան թէ նուի-
 րակ մը: Պարզ մէկ խօսքով մը միայն քաղաքացի
 մը կ'արգելու ու բանտ կը տանի, առանց ամենեին
 ընդգիտութիւն մը կրելու. և այս ժողովուրդը որ
 այնչափ սնապարծ է իր իրաւանցը վրայ, առանց
 բնութեան տեղիք կու տայ այն իշխանութեանը՝
 որ կարծէ թէ նոյն իսկ իրմէն կը բղիխ:

Կը շարունակուի:

1. Մարգուս կիրքը անանկ ճարտասան մ'է, որ միշտ կը համոզէ:
2. Նպատակը տեսնելը դիւրին է, բայց նեղը նպատակին հանդիպընէքը դժար:
3. Հաւատարիմ բարեկամը որթոյ նման է, որ քովի ծառը չոր ալ ըլլայ՝ սիրով անոր կը պըլ-
 րուի:
4. Որուն որ կարողութիւնը հաւասար է իր բաղձանքին, երջանիկ է ան մարգը. և որովհետև մարգուս կարողութիւնը քիչ բանի կը հասնի, ա-
 նոր համար պէտք է որ չափաւորէ իր բաղձանքը:

1. Գղ. Cooptatie.
 2. Պլուտարք. ի վարս Տիբեր. և Վայ. Գրքաբ-
 ոսի:

1. Լտ. Sacro-Sancti.
 2. Լտ. Viator.